# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

№—Ե -03/127　　　　　　　　　　գ. Շիրակամուտ

«16» 10 2017թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 39-Ա որոշումը:
Առդիր 1 էջ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ռ.Պապիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝** 025561501

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» հոկտեմբերի 2017 թվականի N39 - Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ և ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության /օգտագործման իրավունքի գրանցման թիվ 02665588 վկայականը, ,,Մել և Միլ՛՛ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով,,,Քաղաքաշինության մասին՛՛ ՀՀ օրենքի 14³ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստված կարգի 29-րդ կետի բ/ ենթակետով և 32-րդ կետով.

Որոշում եմ

1.Տարանջատել Շիրակամուտ համայնքի թիվ 4 փողոցի թիվ 7 հասցեում Շիրակամուտ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը համաձայն թիվ 1 և թիվ 2 հողամասերի հատակագծերի
2. Շիրակամուտ համայնքի թիվ 4 փողոցի թիվ 7 հասցեում տարանջատված հողամասին տրամադրել փոստային հասցեներ.
ա/ 730,0քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ գ.Շիրակամուտ թիվ 4 փողոց,թիվ 5/1 հողամաս /հողամասի հատակագիծ թիվ 2/
բ/ 679,8քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ գ.Շիրակամուտ թիվ 4 փողոց ,թիվ 5/2 հողամաս /հողամասի հատակագիծ թիվ 1/
3.Փոխել սույն որոշման 2-րդ կետի բ/ենթակետով տարանջատված բնակավայրերի այլ հողերից 730,0քմ մակեկերեսով հողի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ռ.Պապիկյան